ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրավերով, սեպտեմբերի 26-ին, շաբաթ օր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը:

Սրբազան պատրիարքին ուղեկցում էր Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի դիվանապետ հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը:

Նորին Ս. Օծություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում եղբայրական սիրով դիմավորեց սրբազան պատրիարքին և ջերմորեն ողջունեց նորին ամենապատվության սույն պատմական այցելությունը:

Ապգիս Վեհափառ Հայրապետը և Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքը Փրկչի Իջման Ս. Սեղանի առաջ վերանորոգեցին իրենց միասնության ուխտը և միատեղ աղոթեցին Հայ Եկեղեցու հաստատության և աշխարհի խաղաղության համար:

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ դոկտ.-պրոֆ. Ն. Հարությունյանը սեպտեմբերի 30-ին, չորեքշաբթի, ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարքին: Ընդունելության ընթացքում տեղի ունեցավ բարեկամական սիրալիր զրույց:

Նորին ամենապատվությունը հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Մայր Տաճարում հոկտեմբերի 4-ին, Վեհափառ Հայրապետի գահակալության 9-րդ տարեդարձի առթիվ:

Սրբազան պատրիարքը այցելեց Մայր Տաճարը, Հոգևոր ճեմարանը, տպարանը, Ս. Հռիփսիմեի, Ս. Շողակաթի, Ս. Գեղարդի, Ս. Խոր Վիրապի, Սևանի, Մուղնու Ս. Գևորգ, Հառիճա և Մարմաշենի վանքերը, Սաղմոսավանքը, Հովհաննավանքը, ինչպես նաև Երևանի, Թալիշի և Լենինականի եկեղեցիները:

Սրբազան պատրիարքը ուխտի գնաց Օշական՝ Ս. Մեսրոպի դամբարանը, այցելեց Մեսրոպ Մաշտոցի անվան Երևանի Մատենադարանը և պատմական թանգարանը:

Նորին ամենապատվությունը հոկտեմբերի 12-ին հրաժեշտ առավ Մայր Աթոռից լավագույն տպավորություններով:

Հոկտեմբերի 12-ին, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը մեկնեցին Մոսկվա իրենց շքախմբերով:

Հոկտեմբերի 14-ին, Մոսկվայում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարքը այցելեցին Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին և ներկա եղան Զագորսկի աստվածաբանական ճեմարանի 150-ամյակի հանդիսությանց:

Սրբազան պատրիարք հայրը հոկտեմբերի 15-ին մեկնեց Երուսաղեմ, իր Աթոռը:

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
22 հոկտեմբերի 1964 թ.

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ